««ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 59-րդ հոդվածում՝

1. վերնագրում «ժամկետները» բառից հետո լրացնել «, վարժական հավաքներից ազատումը» բառակապակցությունը.
2. լրացնել նոր 11-րդ և 12-րդ, 13-րդ և 14-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Վարժական հավաքներից ազատումն իրականացվում է՝ խաղաղ ժամանակ տնտեսության բնականոն գործունեությունը ապահովելու և կազմակերպությունների անխափան աշխատանքը չխաթարելու նպատակով:

12. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով վարժական հավաքներից կարող են ազատվել կազմակերպությունում (բացառությամբ՝ զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների) աշխատող, համապատասխան մասնագիտություն

ունեցող կամ պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիները, որոնց մասնակցությունը վարժական հավաքներին կխաթարի կազմակերպության բնականոն գործունեությունը:

13. Պետական կառավարման համակարգի մարմինները՝

1) հավաքագրում և հաստատում են իրենց կառավարմանը կամ համակարգմանը հանձնված կամ տվյալ ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացված վարժական հավաքներից ազատման ենթակա պաշտոնների և մասնագիտությունների ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգին համապատասխան,

2) հսկողություն են իրականացնում վարժական հավաքներից ազատման գործընթացի նկատմամբ:

14. Կազմակերպությունների ղեկավարները՝

1) ղեկավարում և հսկում են վարժական հավաքներից ազատման գործընթացը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով.

2) պատասխանատվություն են կրում վարժական հավաքներից ազատման գործընթացի պատշաճ կատարման համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտպանության մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի

ՀՕ-196-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «կապի և տեղեկատվության համակարգերի» բառերը փոխարինել «պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների» բառերով, իսկ «պատերազմական ժամանակաշրջանի» բառերը փոխարինել «ռազմական դրության» բառերով:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 12-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

12) հսկողություն են իրականացնում ոլորտային կազմակերպությունների զորահավաքային ամրագրման կազմակերպման և իրականացման նկատմամբ:»:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի՝ 13-րդ հոդվածի 3-րդ մասը, 24-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը, 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի առաջին նախադասության և 7-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ե. ենթակետի «կապի և տեղեկատվության համակարգի» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Հայաստանի Հանրապետության ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 15-րդ գլխում՝

1. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ»:

2. լրացնել նոր 208.1.-ին հոդված հետևյալ բովանդակությամբ.

«208.1. Զորահավաքային ամրագրման պահանջները խախտելը

1. Պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասու պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված զորահավաքային ամրագրման կարգերի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

3. լրացնել նոր 210.1.-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«210.1. Պահեստազորայինների վերաբերյալ տվյալները օրենսդրությամբ սահմանված կարգով չներկայացնելը

1. Պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասու պաշտոնատար անձանց կողմից պահեստազորայինների վերաբերյալ տվյալները օրենսդրությամբ սահմանված կարգով չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Հոդված 2. Օրենսգրքում լրացնել նոր 15.2 գլուխ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ԳԼՈՒԽ 15.2 ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հոդված 213.3. Վարժական հավաքներից ազատման պահանջները խախտելը

1. Պետական, պետական կառավարման համակարգի, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասու պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վարժական հավաքներից ազատման կարգի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատակի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: